



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2018 թվականի N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝


Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 94-ում «Ստեփանյան Շուշիկ» բառերը փոխարինել «Իսկանդարյան Սաթենիկ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:


Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի հիմնական դպրոցի խորհրդի տնօրենի 2018թ ապրիլի 27-ի գրությունը և մակնավարժական խորհրդի 25.04.2018թ թիվ 7 նիստի քաղվածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ՀԱԿՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՈՐՈՏԱՆԻ (ՄԵՄԵԱՆԻ) ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ



REPUBLIC OF ARMENIA
SYUNIK REGION
SISIAN VOROTAN PRIMARY SCHOOL

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ,
ք. Սիսիան, գ. Որոտան
E-mail: vorotansisian@schools.am
Ելից N 255
27.04.2018թ.

ՀՀ Սյունիքի մարզպետ՝
Վ. Հակոբյանին


Հարգելի՛ պարոն մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի թիվ 7 արտահերթ նիստի քաղվածքը՝ կոլեգիալ կառավարման խորհրդի մեկ անդամի ընտրության մասին:

Տեղեկացնում ենք, որ դադարեցվել է դպրոցի խորհրդի անդամ Եուշիկ Ստեփանյանի լիազորությունները՝ աշխատանքից ազատվելու, այլ աշխատանքի անցնելու պատճառով:

Մանկավարժական խորհրդի 25.04.2018թ.-ին կայացած թիվ 7 արտահերթ նիստում փակ գաղտնի քվեարկության արդյունքում առաջնորվել և ընտրվել է Մաթենիկ Վաղարշակի Իսկանդարյանը:

Խնդրում ենք համոտատել կոլեգիալ կառավարման խորհրդի կազմում կատարված փոփոխությունը:



Մ. Բարսամյան/
ստորագրություն

Քաղվածք

Սյունիքի մարզի «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 25.04.2018թ-ի թիվ 7 արտահերթ նիստի արձանագրությունից:

Օրակարգ

Լսեցին- Հաստատության կոլեգիալ կառավարման խորհրդի կազմի մեկ անդամի ընտրության մասին (զեկուցող՝ Ա. Բարսամյան):

Արտահայտվեցին- Պ. Պետրոսյանը, Ե. Անդրեասյանը:

Առաջադրվեց Սաթենիկ Իսկանդարյանի թեկնածությունը:


Տեղի ունեցած փակ գաղտնի քվեարկության արդյունքում քվեների 10 կողմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ խորհրդի անդամության թեկնածու ընտրվեց Սաթենիկ Վաղարշակի Իսկանդարյանը:

Ղեկավարվելով «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 78-րդ կետով և հիմք ընդունելով փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաշվի առնելով մանկավարժական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները հաստատության կառավարման խորհրդի անդամության թեկնածու համարել Սաթենիկ Վաղարշակի Իսկանդարյանին:
2. Լիազորված մարմնի հաստատմանը ներկայացնել կոլեգիալ կառավարման խորհրդի կազմում կատարված փոփոխությունը:

Ծողովի նախագահ
Քարտուղար



Ա. Բարսամյան
Ա. Իսախանյան